ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019Թ.ԱՊՐԻԼԻ 22-ԻՑ 24-Ը ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
   Հակոբ Վարդանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Գերմանիայի Դաշնային Հանրապետություն (Մայնի Ֆրանկֆուրտ) 2019թ. ապրիլի 22-ից 24-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Գերմանական զարգացման բանկ (KfW)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
   Մասնակցել «Գերմանահայկական հիմնադրամի» (GAF) դիտորդ խորհրդի ամենամյա հանդիպմանը

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Քննարկվեցին՝ «Գերմանահայկական հիմնադրամի» ընթացիկ գործունեությունը, «Վերականգնվող էներգիայի աջակցում» վարկային ծրագրով 4-րդ փուլի տրամադրման հարցը, Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման գծի կառուցման տեխնիկական հարցեր:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Հանդիպումներ տեղի ունեցան Գերմանական զարգացման բանկի (KfW) էներգետիկ հարցերով ստորաբաժանման ներկայացուցիչների հետ: Դիտորդ խորհրդի նիստի ընթացքում քննարկվեց «Գերմանահայկական հիմնադրամի» ընթացիկ գործունեությունը:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**
   Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել քննարկումները Հայաստան-Վրաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման գծի կառուցման տեխնիկական հարցերի լուծման վերջնականացման նպատակով: Համաձայնություն է ձեռք բերվել «Վերականգնվող էներգիայի աջակցում» վարկային ծրագրով 4-րդ փուլի տրամադրման վերաբերյալ՝ 20 մլն եվրոյի չափով:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**
   Շարունակել աշխատանքները «Գերմանահայկական հիմնադրամի» հետ վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացման խթանման նպատակով:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ.**
    26 ապրիլի 2019թ.